

միայն Ա ճակա առողջութեան ավանդ արանք այսին  
... մայութեա ։ Մ առողջութեան ավանդ այսին արանք  
առաջանալի գում Հայու հաօթա Խայմարմաք և մ  
տիր բառ և այժ ուր առ պահան պահան իուն իուն  
առաջ մայութեա ։ առաջ առ պահան պահան առաջ առ  
առաջ մայութեա ։ առաջ առ պահան պահան առ պահան

## ՊԱՏԱՍՏԵՒԹՅՈՒՆ

(Ի ՕՄ - Կ Ի Պ ՈՒ Թ)

Կ Ա Ր Ա Լ Ե Ն Կ Ո Ւ

(Մալառուսական հնքեալթ)

Կրակը հանգաւ, լուսնեակըն է բարձրանում  
Գալլակերը արածում է անտառում  
(Ծ Կ Հ Ե Ն Կ Օ)

## III

Սրանից լետոյ ջաղացպանի մտքերն ասես թէ աւելի  
և մռալիեցան։

— Զէ, աշխարքիս վրալ հէնց գիտենաս բաներն ալնպէս  
չեն զառնում, ինչպէս որ պէտքն էր, — մտածում էր նա ինքն  
իրեն։ — Մարդ իրեն միշտ անհաճու զրութեան մէջ է զդում,  
բայց թէ ինչի՞ — ինքդ էլ չես հասկանում...։ Ահա ալս րոպէիս  
աղջիկը վանդեց ինձ...։ Զնուդ անուանեց, էլ-է...։ Ես որ  
ջնուդ լինէի, ու ալդքան էլ փող ունենալի։ առուտուրը...  
միթէ ալսպէս կապրէի, ինչ կեանք է իմ կեանքս — ջաղացում ինքդ  
աշխատիր, ոչ գիշերները քուն ունեցիր, ոչ ցերեկը մի փոր  
հալալ հաց կեր. շարունակ աշքդ չորս պիտի լինի, ջրին մը-  
տիկ տաս, որ ուրիշ տեղ չվազի, երկանքին նալես, գլանը  
նալես, գլանի ժանանիներին նալես, ժանանիների մատներին  
նալես, որ դուրս չպրծնեն, որ հաւասար առնեն...։ Է՛հ, զեռ  
անիծուած բանուորին էլ պիտի նալես։ Միթէ բանուորին կա-  
րելի է հաւատալ. Հերիք է մի րոպէ հեռացար, իսկոյն ալու

անպիտանն էլ կվեր կենալ, աղջկերանց մօս կվաղէ.... Շան կեանք է ջաղացպանի կեանքը, իսկը շան կեանք, Ուզիդ էր ախ օրից, որ աղաս—Աստուած հոգին լուսաւորէ—հարբած-հարբած կանդնած ջուրն ընկաւ ու խեղղուեց, ինքու աէր դարձալ և սկսալ մի փոքր փողի երես տեսնել.... Բայց էլի օգուտ չկար, Մէկ մանէթի ետեից հոգիդ դուրս կդար, ման ես-դալիս, ման ես դալիս, ետեսիցդ, նոյն իսկ երեսիդ էլ չասած բաները չի մնում, մինչդեռ—շատ օգուտ կալ—չնչին բան։ Երբէք քրիստոնեալ ասածդ կարող չէ ջուղի նման շանուել։ Ա՛յ, որ սատանան ջուղին դնդիցս վերցնէր,—բնչ եմ ասում, ախ ժամանակ կարելի էր մի քիչ դործ անել։ Այն ժամանակ ուրիշ տեղ չէին ունենալ, մնանակ ինձ կդալին թէ հարկը տալու համար փող վերցնելու, և թէ ապրանքի համար, Հը՛, կարելի էր գուցէ մի փոքրիկ օղետուն էլ բանալ.... Իսկ ջաղցը, կամ կարելի էր մի մարդ դնել, կամ հէնց կծախէի էլ կորչի՛։ Հէնց դիտինաս մարդս դեռ մարդ չէ, քանի որ աշխատում է, Ուրիշ բան է, երբ կոպէկը կոպէկ է բերում։ Յիմար պիտի լինիս, որ ալդ չհասկանասու.... Երկու խող որ պահում ես, մէկ էլ տեսար, — խողը բազմածին կենդանի է, — մէկ տարուալ մէջ ամբողջ առւրու դարձաւ Ազպէս էլ փողն է—բաց ես թողնում լիմար մարդկանց մէջ, ոնց որ արածելու ես զրկում, միան չքնես ու նորից ժամանակին տունքնել կարողանաս—կոպէկը տաս կոպէկ կծնի, մանէթը տասը մանէթ....

Ակս միջոցին ջաղացպանը բարձրացաւ հասաւ ախ տեղը, որտեղից ճանապարհը իջնում էր դէպի գետը։ Արդէն դիմացից լսում էր, — հազի հազ, երբ դիշերուալ քամին շնչում էր, — թէ ինչպէս քնաման ջուրը քերում էր նաւերի մէջ, իսկ անդ առածելու ես զրկում, միան չքնես ու նորից ժամանակին տունքնել կարողանաս—կոպէկը տաս կոպէկ կծնի, մանէթը տասը մանէթ....

— Հը՛, լիմար կլինէի, — ասաց նա վերջապէս ճանապարհը շարունակելով—Ով է իմանում, ախ գիշերը որ աղաս-հարբած չլինէր ու լճացած ջրի մէջ չընկնէր, հիմր վաղնւց Գալիալին շլնքիս փաթաթած լինէին։ Իսկ նա իմ ընկերուչէ, Բայց, ահ, ինչքմն անուշ է ալդ աղջկակ պաշը—իւֆ, բնչքան անուշ է.... Ասացի հո, աշխարքիս վրալ ոնց որ պէտք

էր բաներն ախպէս չեն դառնում: Որ ալդ թօլ ու բոսին մի լաւ էլ օժիտ լինէր... ասենք հէնց ախքան, ինչքան որ կողնննի Մակողոնենկոն է տալիս իւր Մօտրիալին,..., Ե՛ս, էլ Բնէ խօսք....

Նա բյրի ստորոտից մը անդամ էլ աչքը լետ ձգեց, նալեցաւ, և ալդ միջոցին դիւզում լանկարծ զանդը հնչեց: Նա տեսուազանգակատունը, որ գեղամիջում, բլրակի վրալ էր շինած: Կարծես մի բան վէր եկաւ զանգակատնից և, զնդոցով ու օրորուելով, թուաւ զնաց դաշտերի վրալ:

— Ե՛սէ, երեսում է արդէն կէս գիշեր եղաւ,—մտածեց նա ինքն իրեն և, բերանը լան բացած լորանջնելով, շտապով բլրից ցած իջաւ՝ գարձեալ իւր սուրուի մասին մտածելով: Մանէթներն աշքի առաջլցը չէին հեռանում: Դրանք կարծես կինդանի լինէին, հէնց ալն և՝ ձեռքից ձեռք էին անցնում, զանազան գործերի մէջ մտնում, աղատ արածում իրենց համար և աճում, բաղմանում: Նա մինչեւ անդամ ծիծաղեց մըտածելով, թէ ինչպէս զանազան լիմարներ կարծում են, թէ իրենք իրենց համար են աշխատում: Բայց կհասնի ժամանակը, և նա, հոտի տէրը, ալդ ամենը իրենց սերունդով կքշէ, կըտանէ ու իւր երկաթապատ մնջուկը կընէ:

Եւ ալս ամեննը համելի մտքեր էին: Միալն երբ ջնուդը միտքն ընկաւ, հաճելի մտքերը նորից փչացան: Զաղացպանը տիրաց, որ ջնուդը բոլոր արօտանելերը իւր ձեռքն է ձգել, և իւր խեղճ մանէթները ուինչ չունին ապրելու, տեղ չունին բաղմանալու, նման ոչխարների հոտին, որն արօտ է դուրս եկել այն տեղի վրալ, ուր արդէն եղել են ջնուդի ածերը.... Ի հարկէ որ ալդտեղ կշտանալու բան չես գտնիլ...

— Եցնէկ սատանան տանէր, պրծնէինք ալդ անիծեավլց.—մտածեց ջաղացպանը, և նրան թուաց, թէ հէնց ալդ է պատճառը, որ ինքն ալսպէս տիսուր էր.... Աշխարքիս երեսին հէնց ալդ է վատը: Անիծեալ ջնուդները չեն թողնում, որ քրիստոնեան իւր արդիւնքը հաւաքէ....

Ալստեղ, բլրի կիսին, որտեղ նաւերի ջրի խաղաղ և ասես թէ քնամոծ խոխոջն արդէն շարունակ լսելի էր լինում, ւ լանկարծ ջաղացպանը արձանի նման կանգ առաւ, և ձեռքով ճակատին խփեց:

— Վահ, ինչ բան կլինէր: ... ձշմարիտ Աստուած, լաւ բան կլինէր: Հէնց ալսօր էլ ուղակի դատաստանի օրն է:

ինչ կասես, որ ջնուդի սատանան մեր Աանկէլին ջոկած լի-  
նի... Բայց չէ. ալդ լինելու բան չէ. Քաղաքում ջնուդների-  
տեղը շատ Մանաւանդ որ Աանկէլը—ծանր մարմնով, ծերու-  
նի, ոսկրն ու կաշին մնացած մի ջնուդ է: Խնչ շահ նրանից-  
Ոչ, ջաղացպանն ալն բազդը չունի, որ հաղարարաւորների-  
միջից Զանցողը հէնց Աանկէլին ջոկէ:

Մի րոպէ ջաղացպանի զլսում, անհանգիստ մրջիւնների-  
նման, ուրիշ մտքեր վխտացին.

—Ե՞ն, Ֆիլիպպ, Ֆիլիպպ. Քրիստոնէին վագել չէ ալն-  
պիսի բաներ մտածել, որ դու ես մտածում. Խելքդ զլուխոք-  
ժողովիր: Աանկէլի որդիքը հո կման, դարձեալ պարտքդ պի-  
տի տաս... Նրկրորդ էլ որ մեղք ես դործում,—Աանկէլը քեզ  
վաստոթիւն չի արել Գուցէ ուրիշները պատճառ ունին ծեր  
միքիտանին անիծելու, բայց չէ որ դու էլ չես քաշուիր ու-  
րիշներից վաշխ առնելուց ...

Բայց ալս անդիւրեկան մտքերի վրայ, որոնք շան նման  
խածոտում էին նրա խիղճը, նա բաց թողեց աւելի կատաղած-  
մտքեր:

—Բայց Էլի ջնուդը ջնուդ է, Քրիստոնեալի թալը չէ.  
Թէ որ ես վաշխ առնում էլ եմ,—էն, կարող չեմ անել; Թէ  
չեմ առնում. առնում եմ ի հարկէ,—գոնէ, կարծում եմ, դար-  
ձեալ յաւ է առկոսը Քրիստոնեալի տալ, քան անհաւատ ջնուդի.

Ալս միջոցին դանջակատնից լսուց զանդի վերջին հա-  
րուածը:

Նրեկ ժամարը, Խվան Կագիլօն, ժամի մօտ քնած, քու-  
նը զիսին քաշել է զանդի թոկը—ալնքան երկար խիեց կէս,  
գիշերը. Բայց վերջին անդամը, երեկ ուրախանալով որ վեր-  
ջինն է, ալնակէս ուժեղ խիեց, որ ջաղացպանը մինչև անգամ  
ցնցուեցաւ երբ սարի քամակից զնդոցը զօղանջեց նրա գըլ-  
խի վերեը, և կետակից անցնելով վառուց անտափի վրայ, հեշ-  
աւատոր դաշտերի վերեն, որոնց միջով պատուա-պատուա անցնեւմ  
է քաղաքի ճամբան....

«Հիմա աշխարքում տամնքն էլ քնած են; —ինքն իրեն,  
մտածեց ջաղացպանը, և մի բան կարծես նրա սրտին խիեց:  
—Ամենքն իրենց տեղում քնած են, մենակ ջնուդներն են  
խոնուում իրենց աղօթատանն ու լաց լինում, մէկ էլ ահա  
ես, անթաղ մնացած մնուելի նման, կանգնած եմ՝ լճացած.  
Ջրի մօտ վատ վատ բաներ միտք անում...»

Եւ շատ տարօրինակ թուաց նրան ալդ ժամը...  
 «Լսում եմ որ,—ասում է, —զանգի ձախը մարում է դաշ-  
 տում, բայց մինչնուն ժամանակ թում է, թէ մի աներնովթ  
 քան կողմանակի ճանապարհով վազ է տալիս, հառաջում...  
 Տեսնում եմ գետակի միւս կողմը անտառը, որ ամբողջապէս  
 թաթախուած է ցողի մէջ, և ցողը փալվիլում է լուսնի շո-  
 ղավի իսկ ինքս մտածում եմ,—ալս ինչպէս է, որ մի ալսովի-  
 սի ամառ գիշեր սառնամանիքի եղեամով է պատած դաւ Եւ  
 երբ այն էլ միտս ընկաւ, թէ ինչպէս աղաս լճակի մէջ խեղ-  
 դուել էր—ես հո ալդ բանի վրայ շատ էլի ուրախացել,—բ-  
 լորովին սիրոս փորս ընկաւ, Ոչ զիտեմ ջաղաց գնամ, ոչ գի-  
 տեմ տեղս կանգնած չնամ...»:

—Գաւրիլօ. հէլ, Գաւրիլօ,—կանչեց նա իւր ջաղացի  
 քանուորին—Հէնց ալդպէս էլ է. անառակը ջաղացը դա-  
 տարկ թողել, զել է վազել, աղջկնրանց մօտ դնացել:

Ֆիլիպպը լուս տեղ, ամբարտակի վրայ ելաւ. Լսում է  
 ջուրը ծոր է տալիս ջրարգելի տակից, իսկ նրան ալնպէս է  
 թւում, թէ մէկը գաղտագողի զուրս է զալիս լճակից ու ա-  
 նիւների վրայ մագլցում...»

«Ե՞ս, աւելի լու է գնամ քննեմ—մտածեց նա...: Բայց  
 մի անդամ էլ եաեը զարձաւ, նալեցաւ.

Լուսինը վաղուց էր երկնքի ամենաբարձր կէտից ան-  
 ցել ու ջրի մէջը նալում.... Զաղացպանը զարմանում էր, թէ  
 ծրտեղից է իւր փոքրիկ գետակի մէջ ալդքան խորութիւն,—  
 համ լուսինն էր տեղաւորուել, համ կապուտ երկինքը իւր բո-  
 լոր աստղերով մէկտեղ, համ էլ այն փոքրիկ մուգի ամպը,  
 որը սակալն փետրի նման թեթև ու արագ թռչում էր քա-  
 ղաքի կողմից.

Բայց որովհետև արդէն նրա աչքերը փակւում էին, ուս-  
 տի և նա երկար ժամանակ զարմացած չննաց և, բանալիքով  
 քաց արաւ զրսի զուռը, ներսից քաշեց սողնակը, որպէս զի-  
 իմանալ, թէ երբ է վերադառնալու բանուորը—գնաց, մտաւ  
 իւր անկազինը...»

## ԻՎ

—Ընդ՛, զէ՞ զեր կաց Ֆիլիպպ... Ալ քեզ օվին,—լան-  
 գարծ մտածեց նա մթնում անկողնից վեր կենալով, կարծես

մէկը մուրճով դլաին հասցրած լինէր:—|նչպէս մտահան էի արել՝—ախր ալդ քաղաքից եկողը հէնց ալն ամպն է, որ նոր քաղաք էր թռչում, և զեռ ջնուղի վարձուորի հնոտ էլ զարմացանք, թէ առանց քամու է շարժւում: Ավմմս էլ կարծես մի մեծ քամի չկալ և եղածն էլ ալն կողմից չէ: Սպասիր: Ականել մի բան կալ...

Նա բորիկ ոտով դուրս եկաւ և, փորն ու մէջքը քորելով, կանգ առաւ ամբարտակի ուղիղ մէջ տեղը: Առաջը թումբ բոնած գետակի կողմից հովը փըում էր նրա մէջքին, իսկ առջնից ուղղակի դէպի նրան էր գալիս փոքրիկ ամպը: Միայն արժմս դա առաջուալ պէս թեթև չէր և արնպէս աղատ ու համաշափ չէր թռչում, հապա կարծես թեթեակի տատանւում էր և, գնդահար եղած թռչնի նման, դէպի ցած էր գալիս Երբ որ ամպը հասաւ լուսնի դէմը, ալն ժամանակ արդէն ջաղացպանը պարդ հասկացաւ, թէ ինչ բան էր դա, որովհետեւ պարձառ լուսնի առաջ որոշակի երեսցին սև թերը, իսկ նրանց ներքենում էլ մի երկալն, գմբդմբացող մօրուքով կուչ եկած մարդու սրատկեր...

— Ե՞րհա: Դու բանը տես, — մտածեց ջաղացպանը: — Մէկին շանչել է: Խնչ անսմ: Թէ կանչեմ: «թող, ալդ իմ է»: Վաւ թէ խեղճ ջնուղը ջարդ ու բուրդ լինի կամ խեղդուի: Քարձը է:

Բայց ալստեղ նա տեսաւ, որ բանը փոխում է — սատանան իւր որսի հետ օդի մէջ մի սլուլտ արաւ և սկսաւ կամաց-կամաց ցած զալ: «Երեսում է աղահութիւն է արել ու իւր ուժից վեր բեռն է առել, — մտածեց ջաղացպանը: — Ե՛ն, ալժմ կարելի է ջնուղին աղատել, որքան լինի էլի մարդ է, հոգի ունի, սատանին հաւասար չէ: Դէ, Ե՛ն, երեսս խաչակնքեմ ու ինչքան կարող եմ գոռամու:

Բայց ալդ անելու տեղ, նա ինքն էլ չէ իմանում ինչպէս է լինում, որ քանի ոտաներում ոլժ կալ, փախչում է ամբարտակից և թաք կենում խիտ ուռենիների տակ, որոնք իրենց կանաչ ճիւղերը, պարեկի նման, թրջում էին ջաղացի հաւաքուած ջրի մէջ: Ալդտեղ ծառերի տակ ալնպէս մութն էր, որ կարծես զնդան լինէր, և ջաղացպանը հաւատացած էր, թէ ոչ ոք իրեն չի տեսնիլ: Եւ, ուղիղը պէտք է ասել, ալդ միջոցին նրա ատամը ատամին: չէր կպչում, իսկ ձեռքն ու ոտքն ալնպէս էին դողդողում, կարծես ջաղացքի չախչախ

լինէր, Բալց և ալնպէս շատ էր հետաքրքրում տեսնելու, թէ բնչ է լինելու,

Սատանան իւր բեռը չանչած մէկ քաշանում, դէպի գետին էր իջնում, մէկ ելնում, անտառից վերև բարձրանում, բայց երնում էր, որ արա ուժի բանը չէ դա, Մի երկու անգամ մինչև խակ ջրին դիպաւ, և ջնուդի ջրին կողեւոց գետակի վրա շրջաններ կազմուեցան, բայց խոկոյն չարը թափահարում էր թեերն ու իւր որսի հետ բարձրանում նման ձկընկուլի, որ ջրի միջից մի խոշոր ձուկն է հանում. Վերջապէս օդի մէջ երկու թէ երեք լայն շրջան արաւ և ուժաթափ եղած շրմկաց, մնուածի նման ամբարտակի մէջ տեղը փոռուեցաւ. լեղապատառ եղած ջնուդն էլ նրա կողքին ընկաւ.

Սական պէտք է ձեզ ասեմ,—չզիտսմ ինչու մոռացել էի, —որ մեր ջաղացպանն արդէն վազուց էր ճանաչել, թէ նաևն էր Զանչողը քաղաքից քաշ տալիս. Խակ երբ ճանաչեց, — բնչ ունիմ թաքցնելու, երբ որ հէնց ինքն էլ խոստովանուեց ալդ, — խնդում եղաւ, զուարթացաւ. «Փառք քեղ Աստուած, — ասաց նա ինքն իրեն, — հէնց ինքն է, մեր Նովոկամենկալի միկիտանը, Դէ, երեի մի բան կլինի. յամենալն դէպս կարծում եմ, ես գործ չունիմ դրա մէջ խառննելու, որովհետեւ երկու շուն կռուելիս, երրորդը չպէտք է նրանց մօտենալ...». Մանաւանդ որ, ես բնչ կապ ունիմ դրանց հետ, հէնց ասենք ոչինչ էլ չեմ իմացել...». Գուցէ ալսուել չէի գտնուում, — հոպարտական չեմ ջնուդի ճամբան նալելու...».

Եւ մէկ էլ ինքն իրեն մտածեց. «Դէ, Ֆիլիպպ, այժմ արդէն ահա քու օրիկդ բացուեց...».

▼

Երկար ժամանակ երկումն էլ — թէ խեղճ ջնուդը և թէ զերը — անշարժ ընկել էին ամբարտակի վրալ. Լուսինն արդէն սկսել էր կարմրել, դէպի մուտք խոնարհել և կախուած մնացել էր անտառի վրա, կարծես նա էլ ուզում էր իմանալ, թէ բնչ է լինելու վերջը... Գլուզում մի աքլար խոզած ձալնով կանչեց, խակ մի շուն էլ մի երկու անգամ հաջեց, երեի վատ երազ պլատ տեսած լինի. Բալց ոչ միւս աքլարները, ոչ միւս շները նրանց ջնետեցին, — երեւմ է, որ լուսը բացուելուն զետքաւական ժամանակ կար.

Զաղացպանը ցնցուեց և սկսաւ կարծել, թէ այս ամենը երազ է, մանաւանդ որ ամբարտակն արդէն մթան մէջ էր և պարզ չէր երեսում, թէ ինչ է ամբարտակի մէջ տեղում սեփական տալիս Բալց երբ գեղից աքլարի ձախը հասաւ, սե կոլտը սկսաւ շարժուել, Եանկէլը բարձրացրեց թասակ ծածկած գլուխը, չորս կողմը նայեցաւ, վերկացաւ տեղիցը և կամացուկը, վախտ ոսները արագիլի նման վեր-վեր բարձրացնելով, ուզեց փախչել:

— Հէլ, հէլ, բռնիր, թէ չէ կիֆախչի, — քիչ էր մնում կանչի վախեցած ջաղացպանը, բալց տեսաւ, որ գեն արդէն բռնել է ջնուղի երկար փեշից:

— Սպասիր, — ասաց նա, — զեռ վազ է... Տես մի, ինչ ճարպիկն է եղել. Յու դեռ չեմ հանդստացել, իսկ դու արդէն ուզում ես ճանապարհը շարունակել. Քու բանդ հեշտ է ի հարկէ, բալց մէկ իուժ էլ հարցրու, հեշտ է քեզ նման ահազին մարդ տանելը, Քիչ է մնում հոգիս դուրս գալ:

— Լաւ, — ասաց ջնուղն աշխատելով իւր փեշն աղքատներ դուք ինչքան ուզում էք հանդստացէք, իսկ ես ոտքով էլ կարող եմ օղետունս հասնել:

Գեց մինչև անդամ վեր կացաւ, նստաւ.

— Ի՞նչ.... Յու քո քրեհղարն եմ, ինչ է, որ քեզ ազօթաւանից տունդ հասցնեմ, շուն շան որդիր. Գետ հանաք ես անում....

— Ի՞նչ հանաքի ժամանակ է, — պատասխանեց խորամանկ Եանկէլը որպէս թէ բոլորովին չհասկանալով, թէ ինչու է զեն իրեն բռնել. — Շատ շնորհակալ եմ, որ մինչև ալսատեղ հասցրիք, իսկ ալստեղից ես ինքս էլ կդնամ: Շպատ տեղ չէ, ինչու անհանդիսա լինիք որ:

Բարիկութիւնից դեռ տեղիցը վեր թռաւ, Նա վեր-վեր ընկաւ, հէնց գլխենաս զլուխը կտրած հաւ լինէր, և թեր մէկ հարուածով զետին զլորեց Եանկէլին, ու ինքը, սլահտառի փուքի նման սկսաւ շունչ քաշել:

— Ա՛ւ ալգախ, — մտածեց ջաղացպանը: — Գուցէ զեխն գովելը մնդք էլ է, բալց ալս բանը հաւանեցմա, — ինչպէս երեսում է նա իւր որսը բաց չի թողնիլ:

Եանկէլը պղղեց ու սկսաւ խիստ բարձր ձախնով կանչել Ակստեղ սատանան ալլ ես կարող չէր բան անել. — Քանի ջը հուզի շունչը բերանն է, ոչ մի հնար չկար նրա ձախը կրտ-  
լութու:

քելու—մէկ ճանի կիկանչէ, «Բայց Բնչ օգուտ,—մտածեց ջաղացանը դատարկ ջաղացին նաևնովլ—Հիմա բանուորս աղջըկնանց հնո է, կամ թէ չէ հարբած վեր ընկած կլինի մի որ և իցէ ցանկապատի տակո»:

Ի պատասխան խեղճ Սանկէլի սրտաճմլիկ լացին մենակ քնչած դորաը կրկաց ճահճի մէջ, մէկ էլ բուն, ալդ գիշերալին անիծեալ թռչունը, ցատկեց եղեգնուուտի մէջ ու մի երկու անդամ, ասես թէ դատարկ տակափ միջից, ճանը ձգեց — բուռ-ռւ, բուռ-ռւ... Լուսինը, կարծես համոզուած, որ ջնուդի բանն արդէն պրծած է, բոլորովին անտառի ետեց մտաւ, և թանձր խաւար իջաւ ջաղացի վրալ, ամբարտակի վրալ, գետի վրալ, իսկ ճահճացած լճակի վրալ սպիտակ մշուշ բարձրացաւ.

Դեւ անհոգաբար թները շարժեց, լետոյ նորից պառկեցաւ, ձեռքերը ծալեց զլսի տակ և ծիծաղեց:

— Ինչքան ողում ես կանչիր, ջաղացքում մարդ չկալ:

— Ո՞րտեղից դիաէք, — սրաննդած ասաց հրէան և շարունակեց կանչել, այս անդամ արդէն ուղղակի ջաղացանին դառնալով.

— Պարոն ջաղացան, ոկ պարոն ջաղացպան։ Արծաթ, ոսկի, շողակ պարոնու Աղաչում եմ, միան մէկ բոպէ, մի ամենաշնչին բոպէ միան դուրս եկէք ալստեղ, ու միան չորս քառ, չորս ամենամանրիկ բառ ասացէք։ Դրա փոխարէն ես ձեր պարտքի կէսը կրաշխեմ ձեղ,

— Բոլորն էլ ինձ կլինի, — պատասխանեց մի բան ջաղացպանի զլսի մէջ։

Ջնուղը զլուխը քաշ զցած սուս եղաւ, և սկսաւ աղի արցունք թափել,

Թաւական ժամանակ էլ անցաւ Լուսինը բոլորովին մալրէր մտել և վերջին շողերը հանդան ամենաբարձր ծառերի կատարներին, թէ երկնքում և թէ երկրիս վրալ կարծես ամեն ինչ խոր քուն էր մտել. ոչ մի տեղից ոչ մի ճան-ծպուտ չէր լուսում, միան ջնուղը կամացուկ լաց էր լինում ու ասում.

— Օի, իմ Սուրաս, օի, իմ դաւակներս, իմ խեղճ զաւակներս...:

Դեւ փոքր ինչ հողնութիւն առած, վեր կացաւ, գեռդարձեալ կղացած նստաւ ամբարտակի վրալ, թէպէտ մութն էր, բայց էլի ջաղացպանի աշքովն ընկած մի զոլոտ եղջիւր,

Նման երնջի եղջևուրներին, որ պարզ երևում էին լճակից բարձրացող մշուշի վրայի:

—Ի՞սկ մերինի նման է, —մտածեց ջաղացանն ու իրեն ախաղէս զգաց, որպէս թէ մի խիստ սառը բան կուշտուած լինէր:

Նա ալդ միջոցին նկատեց, որ ջուղը դեկին թեով քո-թում է:

—Ի՞նչ ես բոթքոթում, —հարցրեց դեղ:

—Ասու Լսիր ինչ եմ ասում...

—Ի՞նչ,

—Ասացէք խնդրեմ, սա ինչ սովորութիւն է, որ անպատճառ խեղճ ջնուդ էք չանչում... Ինչի՞ մի լաւ գուշէք վերցնում: Աչ ալատեղ մօտիկ մի լաւ ջաղացան կալ...

Դեղ խորը ալս քաշեց: Գուցէ նա էլ էր դատարկ ջա-դացի կողքին, լճակի մօտ նստելուց ձանձրացել. ինչ որ է սկսաւ ջնուդի հետ զրոյց անել: Նա վեր առաւ գլխի թասակը, —պէտք է ձեզ ասեմ, որ վարձուորի պատմածին պէս, ճշմարիտ որ զլսին թասակ ունէր ծածկած, իսկ թասակի տակից կախ էին ընկած երկախն դասիկները, —եղունգներով զլուխը պինդ քորեց ճիշտ ախաղէս, ինչպէս չարացած կատուն ճանկերով ճանկուած էտախտակը, երբ մուկը փախչում է ձեռքից, —և լետով ասաց.

—Ախ, Սանկէլ, դու մեր փեշակը չդիտես: Ես նրանց մօտենալ անդամ կարող չեմ:

—Բայց իրաւունք տուէք հարցնելու, ինչ մի դժուար բան կալ ալդուենք, ինչ կալ երկար մտածելու: Ես հո գլխեմ, թէ ինչպէս լանկարծ չանչեցիք ինձ. մինչև անդամ ձալն հանել չկարողացար:

Դեղ ուրախ-ուրախ քրքչաց, ախաղէս որ մինչև անդամ ճանձի մէջ մի գիշերալին թռչունի վախեցրեց, և ասաց:

—Ինչ որ ուղիղ է՝ ուղիղ է—ձեղ հեշտ է չանչելը...: Բայց զիսթս ինչու:

—Ինչու:

—Նրա համար, որ ինքներդ էլ շատ լաւ չանչող էք: Ակսօնս ասեմ, որ աշխարքիս երեսին էլ ձեղ նման մեղաւոր ազգ չկալ:

—Օրվէտ, զարմանալի բան: Բայց ինչ է մեր մեղքը:

Ասեմ՝ լսիր...

Դեղ դարձաւ դէպի ջնուդն ու սկսաւ մատների վրալ հա-  
շուել:

—Մարդկանցից վաշխ էք առնում—մէկ:

—Մէկ, —սաաց նանկէլը նոյնպէս մատը փակելով:

—Ուրիշների արիւն-քրտնքով էք ապրում—երկու  
Երկու:

—Մարդկանց արազով հարբացնում էք—երեք:

—Երեք:

—Քացի ալդ արազի մէջ ջուր էք խառնում—չորս:

—Ասենք լինի չորս Ուրիշ:

—Ակսքանս հերիք չէ, Ախ, նանկէլ, նանկէլ:

—Ես հո չեմ ասում քիչ է, միայն այս եմ ասում, թէ  
դուք ձեր գործը չէք հասկանում: Կարծում էք ջաղացպանը  
վաշխ չէ առնում, կարծում էք ջաղացպանը ուրիշների ա-  
րիւն-քրտնքով չէ ապրում...

—Դէ, ջաղացպանի վրալ սաներ մի դուրս տաք: Նա ալդ-  
պէս մարդ չէ—նա քրիստոնեալ է: Խակ քրիստոնեան պէտք  
է խղճակ ոչ միայն իրավիններին, հապա և օտարներին, խօս-  
քի վրալ հէնց ձեղ, ջնուդներիդ:

—Ել-վայ, ալդ ինչ մեծ սիսալ է,—ուրախ-ուրախ բացա-  
կանչեց ջնուդը, Ուրեմն, ալ ձեղ ինչ կասեմ...

Նա վեր թռաւ տեղից, զեն էլ վեր կացաւ, և երկուսը  
կանգնեցին իրար դէմ: Ջնուցը խր ուսի վրայից մատով ու-  
ռենիների կողմ ցոլց տալով մի բան շշնջաց և, մատը փակե-  
լով, սաաց սատանալին:

— Մէկ:

— Սուտ ես ասում, ավրապէտ բան կարող չէ լինել—ա-  
սաց սատանան մինչեւ անզամ փոքր ինչ վախեցած, և նայե-  
ցաւ ուռենիների կողմը, ուր թաք էր կացել Ֆիլիպպը:

— Հըմ, ես աւելի լաւ գիտեմ: Դեռ սպասեցք:

Նա նորից շշնջաց ու ասաց:

—Երկու: Խակ ալս էլ—և նա դարձեալ սատանի ական-  
ջին մի բան շշնջաց—եղաւ երեք, աղնիւ խօսք...

Սատանան զլուխը շարժեց և մտքի ծովի ընկած կըրկ-  
նեց.

—Անկարելի բան,

—Եկէք գրաղ գանդք: Թէ որ ասածներս ուղիղ լինին:

այն ժամանակ մի տարուց ինձ բաց կթռղնէք և դեռ վիսան  
ներս էլ կքաշէք....

—Հըմ, հրմ, Համաձայն եմ, Ա՛յ օլին կլինէր, Այն ժա-  
մանակ ես իմ ուժու կփորձէի...

—Հաւատացնեմ, շատ շահաւէտ գործ արած կլինէք...

Այս միջոցին միենդու աքլարը կանչեց գիւղում, և թէ-  
պէտ նրա ձախը դարձեալ տուաջուակ պէս քնաթաթախ էր և  
դարձեալ գիշերալին լուութեան մէջ ոչ ոք ոչ մի տեղից նրան  
հետեղ չեղաւ, բայց Զանջողը սթափուեց:

—Ե՛, դու ինձ ալսաեղ հեքեաթներ ես պատմում, իսկ  
ես էլ ականջներս կախած լսում եմ. Ակարուակ ձուն վա-  
ղուակ հաւից լաւ է. Պատրաստուիր:

Դեր թեները շարժեց, երկու սամէնի չափ ամբարտակից  
վեր բարձրացաւ և նորից ուրուրի նման լարձակուց խեղճ  
նանկէլի վրա և չանչերը ձգելով նրա պարեզօտի մէջքին,  
պատրաստուեցաւ թռչելու...

Ոչ, ինչ աղեկտուր ձախներ էր արձակում ծերունի Յան-  
կէլը՝ ձեռները մեկնելով դէպի այն կողմը, ուր սարի միւս  
երեսին գիւղում օղետունն էր գտնւում, և մէկ մէկ իւր կնոջ  
ու զաւակների անունն էր տալիս.

—Օ՛, իմ Սուրաս, օ՛ Նլէօմիկս, Խտելէս, Մովչէս Օ՛  
պարոն ջաղացպան, պարոն ջաղացպան, աղաջում եմ, օղնե-  
ցէք, չորս բառ միայն ասացէք: Ես ձեղ տեսնում եմ, ալ արդ-  
տեղ, ուռենու տակ թաք էք կացել: Խղճացէք խեղճ ջնուդիս,  
չԲ որ ջնուդն էլ կենդանի հոգի ունի:

Շատ սրտածմլիկ էր խեղճ Սանկէլի աղաչանքը, կարծես  
մէկը ջաղացպանի սիրաը ըռների մէջ առած ճմլում լինէր:  
Իսկ սատանան ասես թէ մի բանի էր սպասում,—շարունակ  
նոր թե ելած թռչնի նման թափահարում էր թեները և Սան-  
կէլին ամբարտակի վրա է անր-ծանր տարուքնում...

«Ի՞նչ ցածահոգի դե է, —մտածում էր ջաղացպանն աւելի  
և թաքնուելով ուռենու ետնը,—միայն տանջում է խեղճ  
ջնուդին: Դու բանը տես որ, շուտով աքլարներն էլ կակսեն  
կանչել...»:

Եւ նոր էր մտածել ալսպէս, որ դեր բարձր ձախով ծի-  
ծաղեց, ձախը փառեց գետի վրա և միանդամից թռաւ,  
բարձրացաւ վերև...: Ջաղացպանը զլուխը վեր բարձրացրեց,  
բայց մի րոպէից արդէն սատանան ագռաւի չափ էր երեսում,

գետով ծտի չափ, լեռով ճանձի, մմղուկի, և անհետացաւ:

Հէնց ալստեղ վախ ընկաւ ջաղացպանի վրալ, — ծնկները դողղողում էին, ատամներն իրար խփում, մաղերը բիշ-բիշ կանդնել, ախպէս որ, թէ ալդ միջոցին զլիսարկ լինէր, վէր կընկնէր. և ախունետե ինքն էլ չէ վիշում, թէ ինչպէս իւր ոտները նրան ջաղաց, իւր խուցն են հասցրել...

## ՎԻ

— Թիս-թիսկ...

— Թիս-թիս-թիսկ... Թիս-թիսկ...

Մէկը ջաղացի դուռն էր թիկացնում, և ախ էլ ախպէս պինդ, որ սազ չէնքը ազմուկով լցուել, ամեն կողմից արձագանք էր տալիս. Ջաղացպանը վախեցաւ — չինթ սատանան. լետ լինի դարձած, — ի զուր հո չէր ջնուդի հետ մի բան փըափսում, — ուստի դլուկը կոխեց բարձի տակ:

— Թիս-թիսկ... Թիս-թիսկ.... Ե՛ւ, մղա, դուռը բաց:

— Զեմ բանալ:

— Ինչո՞ւ չէք բանալ:

Ջաղացպանը գլուխը բարձրացրեց:

«Հը», հէնց գիտենաս բանուորիս, Գաւրիլօի ձալնը լինի... — Գաւրիլօ, զու ես:

— Էլ ով կլինի.

— Հապա երդում կեր:

— Դէ:

— Երդում կեր:

— Դէ Աստուած վկալ ես եմ. Ո՞վ է իմացել, որ հո ինքս լինիմ ու ես չլինիմ. Դեռ արի զրա համար երդում կեր: Ջարմացք բան...

Բալց և ախպէս ջաղացպանս իսկոյն չհաւատաց. Նա վերև բարձրացաւ ու կամացուկ զռան վերսի փոքրիկ պատուհանից դուրս նալեցաւ Ուղիղ որ, ներքնը պատի մօտ կանգնած էր բանուորն ու մի ախպիսի բան անում, որ դուցէ ոչ ոք էլ լսած չլինի, թէ սատանաները մի արդպիսի բանանեն. Հէնց իմանաս ծանր քար վերցրին ջաղացպանի սրտի վրալից, նա ցած իջաւ ու դուռը բաց արաւ:

Որ ջաղացպանին դրանը չտեսաւ, բանուորը նոյն իսկ լետ-լետ քաշուեցաւ:

- Ալդ ինչ է հալդ, աղա։  
 —Ի՞նչ կալ որ։  
 —Ալդ ինչ ես արել, ինչի սաղ երեսդ ալրի մէջ թա-  
 թախել—պատի նման սպիտակել ես։  
 —Իսկ դու աղալ, հո գետակի մօտով չես եկել։  
 —Գետակի մօտով եմ եկել։  
 —Իսկ վերև մտիկ չես տուել, ալ տղակ։  
 —Վերև էլ եմ մտիկ տուել։  
 —Այ տղակ, հո չես տեսնել, իքին...  
 —Ո՞ւմը։  
 —Ո՞ւմը... Յիմարի Ումը պիտի լինի, նրան, որ օղեվա-  
 ճառ Նանկէլին չանչան տանում էր։  
 —Ո՞վ պէտք է նրան չանչած լինի։  
 —Ո՞վ... Ի հարկէ ջնուղների դեղ, Զանչողը։ Միթէ չը  
 զիտես նրանց ինչ օրն է արօր։  
 Բանուորը պղտոր աչքով նալեց ջաղացպանին ու  
 հարբեց։  
 —Իսկ դուք, աղա, դեղ գնացել էք։  
 —Գնացել եմ։  
 —Իսկ օղեառն հո չէք մտել։  
 —Մտել եմ։  
 —Եւ օղի հո անուշ չէք արել։  
 —Թիւն, Արի ու լիմարի հետ զրոյց արա. Հենց նոր՝ նո-  
 իմ աչքովս տեսալ—սատանան ջնուղի հետ ամբարտակի վրաէ  
 հոդնութիւն էր առնում։  
 —Որտեղ։  
 —Ա՛յ ալստեղ, հէնց մէջ տեղը։  
 —Յետո՞ւ։  
 —Յետու, առաւ ու...—ջաղացպանը շվացրեց ու ձեռքը  
 շարժեց օդի մէջ։  
 Բանուորը նալեցաւ ամբարտակին, լետու, աչքը երկինք  
 բարձրացրեց ու դլուխը քորեց։  
 —Ա՛յ քեղ զարմանալի բան։ Հիմա ինչ պիտի լինի. Ի՞նչ  
 պիտի անենք առանց ջնուղի։  
 —Ինչիդ է անպատճառ ջնուղը, հը։  
 —Չեմ ասում, թէ ինձ է պէտք... Բալցէլի... Կ', մի  
 ասէք, աղա—առանց ջնուղի, կարծես, էն չի... առանց ջնու-  
 ղի եօլա չի դնացուիլ...»

— Բան ասաց.... Ախմախես ծնուելու ախմախ էլ կը-  
մեռնեաւ.

— Հը, ինչ էք անպատիւ անում, Զեմ ասում, թէ ես  
խելօք եմ, բայց և ալնպէս գիտեմ հո սեր որդն է, սպիտակը  
ձրը բանելու համար ջաղաց եմ դալիս, իսկ խմելու—օղե-  
տուն, թէ որ աղքան խելօք էք, դէ ասացէք տեսնեմ—այժմ  
ով է մեղ համար օղետուն պահելու,

— Ո՞վ.

— Հա, ով.

— Հէնց ասենք ես.

— Դուք:

Բանուորը աչքերը չռած մտիկ առւաւ ջաղացպանին,  
յետու զլուխը շարժեց, լեզուով շրխկացրեց և ասաց.

— Հա, թէ որ աղպէս լինի, չդիտեմ,

Ջաղացպանը նոր նկատեց, որ բանուորը ոտների վայ  
պինդ կանգնել. Հի կարողանում և ձախ աչքը նորից կապ-  
տացրել են. Եւ ուղիղն ասած, մի ալնպիսի անճոռնի երես  
ունէր ալս բանուորը, որ մարդ տեսնելիս հէնց ուղում էր  
երեսին թքի. Բայց դուք բանը տեսէք, որ աղջկերանց մօտ  
խիստ աջողակ էր և շատ անդամ են ջանելներն աշխատել  
նրան թալաքի մէջ ձգել, և երբ ձեռքերն է ընկել, ալնքան  
են տուել, որ ջանումը հալ չէ մնացել.... Որ նրան թակում  
էին—ալդ դարմանալու բան չէ, հապա զարմանալին ալն է,  
որ թակելու պատճառ ունէին:

«Աշխարքումս չկալ մի զզուելի մարդ,—մտածեց ջաղաց-  
պանը նրան նակելով,—որ գոնէ մի աղջիկ չսիրէր նրան.  
Բայց ալսպիսիներին սիրում են երկու, երեք, տասը... աղջիկ-  
թիւն, զրոյը տանէ....»

— Թիստես ինչ կալ, Դաւրիլուշկա, — բայց էլի քաղցրու-  
թեամբ ասաց ջաղացպանը, — եկ, իմ կողքին քնիր:

Ենր մարդու տեսնում է ալն, ինչ որ կս եմ տեսել, կար-  
ծես վախ է ընկնում վրան.

— Ի՞նչ կար կպահ, կպառկեմ:

Մի վարկեան անցած-չանցած, բանուորն արդէն խոըմ-  
փում էր. Ալս էլ ասեմ, — մի զիշեր ես էլ եմ ջաղացում քնել, —  
ալդ բանուորի նման խոմիփացնող մարդ էլ զժուար թէ լինի.  
Ով որ խռմփոց չի սիրում, լաւ կանի նրա հետ մէկ սենեա-  
կում չքնի, — սաղ դիշերը անքուն կմնալ....»

—Գաւրիլօ, —ասաց ջաղացպանը, —Էլ, Գաւրիլօ!—  
 —Ի՞նչ կալ էլի. ոչ ինքդ ես քնում, ոչ էլ թողնում ես  
 որ ուրիշը քնի!—  
 —Քեզ դարձեալ ծեծեցին, ի՞նչ առաջանայած է առաջ  
 —Ետանի, ի՞նչ!—  
 —Ո՞րտեղ!—  
 —Ռւղում էք ամեն բան իմանալի կողնալում: Կողնալում  
 —Կողնալում էլ... ի՞նչ գործ ունէիր աբնեղի մասունք  
 —Ի՞նչ գործ... ինչիդ է, որ հարցնում ես, հի, հի, հի...  
 —Նովո-կամենկալի աղջկերքը քեղ հերիք չեն, ինչ է,  
 —Թիւն, Ձեր նովո-կամենկալի աղջկերանց վրալ նակե-  
 զոց սրդէն զղուել եմ. ինձ լարմար ոչ մէկը չկար:  
 —Հապալ ալրի կնոջ Գալիան:  
 —Գալիան... ի՞նչ է որ Գալիան:  
 —Նրան գնացնել ես:  
 —Ինչու չպիտի դնացած լինիմ, Զաղացպանը անկողնի մէջ կեր թռաւ:  
 —Սուտ ես ասում. շան որդի, ձախդ կտրիր:  
 —Հէջ էլ սուտ չեմ ասում, ես կեանքումս սուտ չեմ ա-  
 սել. Սուտը թող խելօքներն ասեն: Բանուորը լորանջեց ու քնատ ձախով ասաց.  
 —Յիշում էք, աղա, որ ամբողջ շարաթ աջ աչքս ուռած  
 էր, բան չէի տեսնում...  
 —Բետով!—  
 —Ալդ՝ շան քածի արածն էր... Թքել եմ նրա վրակ,  
 մէ ինչ... Բան է դաել—Գալիան:  
 —Անմ, ալդ կարելի էր մոտածնց ջաղացպանը!—Գաւ-  
 րիլօ, Էլ, Գաւրիլօ... Շան որդին նորից քնեց, գիտես...:  
 Գաւրիլօ!  
 —Ի՞նչ կալ դարձեալ: Կրակը հո ջանդ չի ըսկել:  
 —Կարգուել կուղիս:  
 —Դեռ կօշիկ կարել չեմ տուել: Կարել տամ, այն ժառ  
 մանակ միտք կանեմ:  
 —Քեզ համար ես կարել կտամ կօշիկ... Գլխարկ էլ  
 կառնեմ, գօտի էլ:  
 —Ալդպէս որ լինի ինչու չէ, Ես ձեզ աւելի խելօք բան  
 ասեմ:  
 —Ի՞նչ:

—Այն որ գիւղում արդէն աքլարները կանչում են. Լը-սում էք, ինչպէս են ձախները դցել:

Եւ ուղիղ որ,—գիւղում, դուցէ հէնց Գալիալինց խրճի-թում, մի աքլար կանչում, բողազն էք պատառմա կու-կու-վի-կու-նե...

—Կու-կու-լի-կու-նե... Կու-լու-կու-նե—նեռուից, գիւղի էն ծալրից, ու մօտից զանազան ձախներով պատասխանում էին նորան միւս աքլարները, ալնակէս որ սաղ աշխարհ աքլարի ձարնով էք լցուել, և բացի արդ խուցի պատերը բոլորը, նորն իսկ ամենամանը ճեղքերն անգամ լուսաւորուել էին.

**Զաղացպանը անուշ-անուշ յօրանջեց.**

—Է՛ս, ալժմ արդէն նրանք հեռու են, զանաք բան է—մինչև տասներկու խիփելը նա արդէն մինչև իմ ջաղացը էք հասել, Հէ, էէ... ալժմ Ետնիկլին դրել ես՝ զտիր...: Օիխն օլին—ակս էք: Թէ որ ալս բանս ուրիշներին պատմեմ, գուցէ չհաւատան, անունս ստախօս դուրս դար: Բայց Բ՛նչ ունիմ սուտ-ասելու—վաղը ինքներն էլ կտեսնեն, Աւելի լաւ է, որ ես սուտ-անեմ: Ո՛վ է իմանում, գուցէ զեռ ասեն, որ ես...: Է՛ս, Բնչ բան ունիմ: Թէ որ ջնուղին ես սպանած լինէի, կամ մի պատ-պիսի ուրիշ բան եղած լինէր, հա, այն ժամանակ պատաս-խանատու կլինէի, բայց ալստեղ ես մատը չունիմ: Եւ Բնչ բան ունի զրանց գործին խառնուելու: Ես անմասն եմ, ո-չինչ էլ չեմ իմացել. Ալջ կեր—զրադ ման արի. անսելքի աշ-խատանքը—խելօքի փորը...: Ես սուտ ու փուս իմ գործիս կլինիմ...:

Ալսպէս ջաղացպանն Ֆիլիպպը խօսում էք ինքն իրեն, որպէս զի խիղճը թեթեացնի. միան երը արդէն բոլորովին քնի գնալու վրա էք, նրա սրտի մի ծածուկ անկիւնից օձի-նման դուրս սողաց ալս միտքը, թէ.

—Դէ, Ֆիլիպպ, օրիկդ բացումց:

Ալս միտքը հեռու քշեց նրանից բոլոր միւս մտքերն ու ինքը տէր զարձաւ:

Եւ ալս մտքովն էլ քնեց:

**Թարդմ. ՄԱԽԵԼ Վ.Ա.ՐԴ.**

(Կը շարունակուի)